*մասեղանք, և ուրիշ որ և է շահաւոր և արգասաւոր գործեր հրէական ազգին համար միայն կը պտղաբերեն: Եւ այսպէս ահա ամենայն ոք կարող է գուշակել, թէ հրէական վաշխառութեան անյագ ցանկութիւնն և տիրապետութիւնըն որպիսի հանրական աղքատութիւն կը սպառնայ Եւրոպիոյ. ուստի և կարևոր կը տեսնուի սանձ դնել անոնց և նորոգել նախնի օրէնքները, զորս 'ի վնաս ընկերութեան խափանեցին տէրութիւնք:*

*Այսպիսի համառօտ տեսութեամբ ահա կը տեսնուի, թէ որչափ ունայն դրութիւն և կարծիք է վիճակագրաց ապառնոյն վրայ ընծայած հետևանքն. և ինչպէս որ կարելի չէ պատասխանել հարցմանս, թէ որչափ պիտի լինի Եւրոպիոյ ժողովուրդն յետ յիսուն կամ հարիւր ամաց. նոյնպէս առաւել ևս անհնարին է հետևեալն, թէ ինչ պիտի լինի իւր քաղաքական և տնտեսական վիճակն: Միակ ստոյգ պատասխանն է, թէ երկուց ևս լուծումն Աստուած գիտէ. և կամ ուրիշ բառերով. Ապառնին 'ի ձեռս Աստուծոյ է:*

*Սակայն անտարակոյս կրնանք հաստատել, թէ մարդկային ընկերութիւնն պիտի յառաջադիմէ 'ի բարին և 'ի լաւագոյնն և պիտի զարգանայ յամենայնի, եթէ կրօնից բարերար ազդեցութեան հետևող լինի:*

---


## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

—

ՆՈՐ ԸՆԹԱՑՔ ԳԱՂՂԻԵՐԷՆԷ Ի ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ Ա-Ե

*ՅՕՐԻՆԵՑ*

**ՈՍԿԵԱՆ Ա. ԿՈՄԻՏԱՍ**

Կ. ՊՕԼԻՍ. ՏՊՐ. Յ. ԳԱՎԱՖԵԱՆ

ՏԱՐԵՐՔ

**ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ**

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՆ

*ԵՐԿԱՍԻՐԵԱՑ*

**Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՔԱՋՈՒՆԻ**

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ


digitised by A.R.A.R.@